ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

2019-2021թթ. ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ (հունվար-հունիս)

Տնտեսության ակտիվության ցուցանիշ (ՏԱՑ)՝ %







Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)

Տնտեսական ակտիվության ցուցանիշը 2021թ. հունվար-հունիսին 2020թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ (աճողական) կազմել է՝ 105.0%, 2020թ. հունվար-հունիսին 2019թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 95.4%, իսկ 2019թ. հունվար-հունիսին ն 2018թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 106.4%:

Արդյունաբերական արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հունվար-հունիսին կազմել է 1 տրլ 36 մլրդ 519.7 մլն դրամ, ինչը 2020թ. և 2019թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 140 մլրդ 567.6 մլն. և 136 մլրդ.19.5 մլն դրամով:

Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հունվար-հունիսին կազմել է 277 մլրդ 994.2 մլն դրամ, ինչը 2020թ. և 2019թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 38 մլրդ 26.9 մլն. և 30 մլրդ 43.2 մլն դրամով:

Իրականացված շինարարության ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հունվար-հունիսին կազմել է 125 մլրդ 599.2 մլն դրամ, ինչը 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 19 մլրդ 819.6 մլն.դրամով, իսկ 2019թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 5 մլրդ 404 մլն դրամով:

Առևտրի շրջանառությունը (ընթացիկ գներով) 2021թ. հունվար-հունիսին կազմել է 1 տրիլիոն 471 մլրդ 244.3 մլն դրամ, ինչը 2020 և 2019 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 208 մլրդ 785.5 մլն և 56 մլրդ 155.2 մլն դրամով. իսկ այլ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հունվար-հունիսին կազմել է 861 մլրդ 736.9 մլն դրամ, ինչը 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 50.2 մլն դրամով, իսկ 2019թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 43 մլրդ 675.2 մլն դրամով:

Արդյունաբերական արտադրանքի ծավալի իրական աճը 2021թ. հունվար-հունիսին 2020թ. հունվար-հունիսի նկատմամբ կազմել է 102.1%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 101.5%-ի և 106.9%-ի պարագայում:

Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալի իրական աճը 2021թ. հունվար-հունիսին 2020թ. հունվար-հունիսի նկատմամբ կազմել է 106.8%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 101.7%-ի և 92.6%-ի պարագայում:

Իրականացված շինարարության ծավալի իրական աճը 2021թ. հունվար-հունիսին 2020թ. հունվար-հունիսի նկատմամբ կազմել է 110.8%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 76.6%-ի և 104.7%-ի պարագայում:

ԱԺԲԳ

Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)





Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)





Առևտրի շրջանառության իրական աճը 2021թ. հունվար-հունիսին 2020թ. հունվար-հունիսի նկատմամբ կազմել է 108.0%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 88.9%-ի և 108.9%-ի պարագայում. իսկ ծառայությունների ծավալի իրական աճը 2021թ. հունվար-հունիսին 2020թ. հունվար-հունիսի նկատմամբ կազմել է 102.7%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 93.6%-ի և 115.3%-ի պարագայում:

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հունվար-հունիսին կազմել է 299 մլրդ 532.1 մլն դրամ, ինչը 2020թ. և 2019թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 118 մլրդ 4.2 մլն. և 140 մլրդ 341.3 մլն դրամով:

Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հունվար-հունիսին կազմել է 589 մլրդ 342.7 մլն դրամ, ինչը 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 11 մլրդ 624.2 մլն դրամով, իսկ 2019թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 15 մլրդ 165.2 մլն դրամով:

Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հունվար-հունիսին կազմել է 136 մլրդ 391.4 մլն դրամ, ինչը 2020թ. և 2019թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 10 մլրդ 367.3 մլն և 12 մլրդ 964 մլն դրամով:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հունվար-հունիսին կազմել է 10 մլրդ 653.5 մլն դրամ, ինչը 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 571.9 մլն դրամով, իսկ 2019թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 2 մլրդ 120.6 մլն դրամով:

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2021թ. հունվար-հունիսին 2020թ. հունվար-հունիսի նկատմամբ կազմել է 107.2%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 124.3%-ի և 106.8%-ի պարագայում:

Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2021թ. հունվար-հունիսին 2020թ. հունվար-հունիսի նկատմամբ կազմել է 98.9%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 96.4%-ի և 108.7%-ի պարագայում:

Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2021թ. հունվար-հունիսին 2020թ. հունվար-հունիսի նկատմամբ կազմել է 109.5%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 99.5%-ի և 99.7%-ի պարագայում:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2021թ. հունվար-հունիսին 2020թ. հունվար-հունիսի նկատմամբ կազմել է 105.6%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 79.1%-ի և 102.7%-ի պարագայում:

ԱԺԲԳ

Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Սպառողական գների ինդեքսը (ՍԳԻ) նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Զուտ միջազգային պահուստներ (ԶՄՊ), ժամանակաշրջանի վերջի դրությամբ, մլն. դրամ





Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հունվար-հունիսին կազմել է 121 մլրդ 418.7 մլն դրամ, ինչը 2020 և 2019 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ պակաս է համապատասխանաբար 100 մլրդ 292 մլն և 96 մլրդ 84.7 մլն դրամով:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հունվար-հունիսին կազմել է 152 մլրդ 94.7 մլն դրամ, ինչը 2020 և 2019 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 16 մլրդ 96.9 մլն և 27 մլրդ 611.5 մլն դրամով:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հունվար-հունիսին կազմել է 233 մլրդ 40.9 մլն դրամ, ինչը 2020 և 2019 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 4 մլրդ 635.4 մլն և 35 մլրդ 606.7 մլն դրամով:

Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալի իրական աճը 2021թ. հունվար-հունիսին 2020թ. հունվար-հունիսի նկատմամբ կազմել է 63.9%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 101.6%-ի և 130.1%-ի պարագայում:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալի իրական աճը 2021թ. հունվար-հունիսին 2020թ. հունվար-հունիսի նկատմամբ կազմել է 112.7%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 107.1%-ի և 104.8%-ի պարագայում:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալի իրական աճը 2021թ. հունվար-հունիսին 2020 թ. հունվար-հունիսի նկատմամբ կազմել է 103.1%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 111.7%-ի և 115.9%-ի պարագայում:

ՍԳԻ-ն 2021թ. հունվար-հունիսին 2020թ. հունվար-հունիսի նկատմամբ կազմել է 105.7%, 2020թ. հունվար-հունիսին 2019թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 100.5%, 2019թ. հունվար-հունիսին 2018 թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 102.0%: ՍԳԻ-ն 2021թ.հունիսին 2020թ.դեկտեմբերի նկատմամբ կազմել է 103.8%, 2020թ.հունիսին 2019թ. դեկտեմբերի նկատմամբ՝ 101.0%, 2019թ.հունիսին 2018թ.դեկտեմբերի նկատմամբ՝ 100.1%:

Զուտ միջազգային պահուստները (ԶՄՊ) 2021թ. հունիսի վերջի դրությամբ կազմել է 1 տրիլիոն 243 մլրդ 368 մլն դրամ, ինչը 254 մլրդ 576 մլն դրամով կամ 25.7%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 496 մլրդ 339 մլն դրամով կամ 66.4%-ով ավել է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Աշխատանք փնտրողների թիվը 2021թ. հունիսի դրությամբ կազմել է 90330 մարդ, ինչը 2712 մարդով կամ 3.1%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 7808 մարդով կամ 9.5%-ով ավել է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից: Պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին ամսական թվաքանակը 2021թ. հունիսի դրությամբ կազմել է 61656 մարդ, ինչը 1169 մարդով կամ 1.9%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 2108 մարդով կամ 3.3%-ով պակաս է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

ԱԺԲԳ

ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը և առևտրի հաշվեկշիռը (մլն ԱՄՆ դոլար)



ՀՀ արտահանումը և ներմուծումը (մլն ԱՄՆ դոլար)



Միջին ամսական անվանական աշխատավարձը աճողական, դրամ



Պետական բյուջեի պակասուրդը/հավելուրդը և դրա ֆինանսավորման աղբյուրները, ընթացիք գներով, մլն դրամ



Արտաքին և փոխադարձ առևտրի առևտրաշրջանառության ծավալը 2021թ. հունվար-հունիսին կազմել է 3 մլրդ 571.7 մլն դոլար, ինչը 422.4 մլն դոլարով կամ 13.4%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 61.4 մլն դոլարով կամ 1.7%-ով ավել է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռը 2021թ. հունվար-հունիսին կազմել է -812.7 մլն. դոլար, ինչը 99.8 մլն դոլարով կամ 10.9%-ով պակաս է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 325.5 մլն դոլարով կամ 28.6%-ով պակաս է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Արտահանման ծավալը (ՖՕԲ գներով) 2021թ. հունվար-հունիսին կազմել է 1 մլրդ 379.5 մլն դոլար, ինչը 261.1 մլն. դոլարով կամ 23.3%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 193.4 մլն դոլարով կամ 16.3%-ով ավել է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Ներմուծման ծավալը (ՍԻՖ գներով) 2021թ. հունվար-հունիսին կազմել է 2 մլրդ 192.2 մլն դոլար, ինչը 161.3 մլն դոլարով կամ 7.9%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 132 մլն դոլարով կամ 5.7%-ով պակաս է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Միջին ամսական անվանական աշխատավարձը (աճողական) 2021թ. հունվար-հունիսին նախնական գնահատմամբ կազմել է 196440 դրամ, ինչը 10040 դրամով կամ 5.4%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 19664 դրամով կամ 11.1%-ով ավել է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

2021թ. հունվար-հունիսին ՀՀ պետական բյուջեի պակասուրդը կազմել է -75 մլրդ 478.1 մլն դրամ, ընդ որում, ներքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը՝ -202 մլրդ 144.5 մլն դրամ, արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը՝ 277 մլրդ 622.6 մլն դրամ: 2020թ. հունվար-հունիսին ՀՀ պետական բյուջեի պակասուրդը կազմել է -48 մլրդ 911 մլն. դրամ: Ընդ որում ներքին և արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար -8 մլրդ 707.6 մլն դրամ և 57 մլրդ 618.6 մլն դրամ: 2019թ. հունվար-հունիսին ՀՀ պետական բյուջեի հավելուրդը կազմել է 121 մլրդ 865.3 մլն. դրամ, ընդ որում, ներքին և արտաքին աղբյուրներից ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար -77 մլրդ 247.9 մլն դրամ և -44 մլրդ 617.4 մլն. դրամ:

Տեղեկատվության համար աղբյուր են հանդիսացել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի ինտերնետային կայքի հրապարակումները ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ